«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«08» մայիսի 2015թ.

Հաստատում եմ
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետի ժամանակավոր պաշտոնակատար
Հ. Թունյան

ԳԲԽ-09/15 բողոքը քննող
հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Ջի Վի Էն» ՍՊԸ-ի 22.04.2015թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. **«Ջի Վի Էն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Ջի Վի Էն» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 22.04.2015թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ «ԵՊՀ» Հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից հայտարարված «ԵՊՀ-ՇՀԱՊՁԲ-15/09» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ)

մասնակցելու նպատակով 03.04.2015թ. ներկայացրել է գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (հավելված թիվ 5), գնային առաջարկ (հավելված թիվ 5.1) և 44-րդ, 45-րդ, 52-րդ և 54-րդ չափաբաժիններով առաջարկված ապրանքների տեխնիկական բնութագրերը:

Ընկերությունը հայտնել է, որ 2015թ. ապրիլի 7-ին և 13-ին ստացել է համապատասխանաբար NN 1 և 2 արձանագրությունները, որոնցում հստակ երևում են տվյալ Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գները:

Նկատելով, որ իր և նույն չափաբաժիններով մասնակցող մասնակիցների ներկայացրած գների միջև առկա են մեծ տարբերություններ, Ընկերությունը գրավոր դիմում է ներկայացրել «ԵՊՀ-ՇՀԱՊՁԲ-15/09» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահին՝ խնդրելով տրամադրել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների գնային առաջարկների և տեխնիկական բնութագրերի պատճենները, սակայն Պատվիրատուի կողմից տրամադրվել են միայն գնային առաջարկները:

Ընկերությունը նշել է, որ Ընթացակարգի 44-րդ և 45-րդ չափաբաժիններով «Մագնատէս» ՍՊԸ-ն առաջարկել է «Ֆոտոխցիկ CANON կամ համարժեք», իսկ 54-րդ չափաբաժնով՝ «Դիկտոֆոն SONY կամ համարժեք» այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը: Ըստ «Ջի Վի Էն» ՍՊԸ-ի՝ տվյալ դեպքում ակնհայտորեն խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները:

«Ջի Վի Էն» ՍՊԸ-ն հայտնել է, որ գնահատող հանձնաժողովի 03.04.2015թ. ժամը 09:30-ին կայացած նիստի N 1 արձանագրության 1.5 կետով որոշում է կայացվել «Մագնատէս» ՍՊԸ-ին Ընթացակարգի 44-րդ, 54-րդ և 55-րդ չափաբաժինների մասով հրավիրել պարզաբանման: Գնահատող հանձնաժողովի 10.04.2015թ. ժամը 12:00-ին կայացած նիստի N 2 արձանագրության 1.5 կետի համաձայն՝ «Մագնատէս» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի 44-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին: Գնահատող

հանձնաժողովի 13.04.2015թ. ժամը 16:00-ին կայացած նիստի N 3 արձանագրության 1.5 կետի համաձայն՝ «Մագնատէս» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած Ընթացակարգի 44-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին և 2.1 կետում ընտրված, 2-րդ և 3-րդ տեղերն զբաղեցրած մասնակիցների ցուցակում «Մագնատէս» ՍՊԸ-ն ընդհանրապես ներառված չէ, սակայն նույն օրը գնահատող հանձնաժողովի 13.04.2015թ. ժամը 16:00-ին կայացած նիստի արդեն շտկված N 3 արձանագրության 2.1 կետով «Մագնատէս» ՍՊԸ-ն Ընթացակարգի 44-րդ չափաբաժնով ճանաչվել է որպես ընտրված մասնակից:

«Ջի Վի Էն» ՍՊԸ-ն բանավոր դիմել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահին՝ ևս մեկ անգամ խնդրելով տրամադրել մասնակիցների ներկայացրած տեխնիկական բնութագրերը, ինչին գնահատող հանձնաժողովի նախագահը պատասխանել է, որ «Մագնատէս» ՍՊԸ-ն բանավոր հավաստել է, որ առաջարկված ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են հրավերով պահանջված տեխնիկական բնութագրերին այն դեպքում, երբ պարզ երևում է, որ «Մագնատէս» ՍՊԸ-ի գնային առաջարկը անորոշ է և այլընտրանքային մեկնաբանություն պարունակող և «Մագնատէս» ՍՊԸ-ի բանավոր հավաստումը, փաստորեն, բավարար է եղել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի համար:

«Ջի Վի Էն» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է նաև, որ «ԷյջԹի Էլեքթրոնիքս» ՍՊԸ-ն Ընթացակարգի 52-րդ չափաբաժնով առաջարկել է «Panasonic KX-TS2368RUW» ապրանքը, որը Ընթացակարգի տեխնիկական բնութագրի եռագիծ LCD էկրան էական պահանջին (մի հատկանիշ, որն էականորեն բարձրացնում է ապրանքի գինը) չի համապատասխանում, քանի որ տվյալ ապրանքը եռագիծ LCD էկրանով չէ, հետևաբար հրավերով նախատեսված 52-րդ չափաբաժնով պահանջվող ապրանքին համարժեք չէ:

«Ջի Վի Էն» ՍՊԸ-ն տեղեկացրել է, որ «ԷյջԹի Էլեքթրոնիքս» ՍՊԸ-ն Պատվիրատուին տրված պարզաբանմամբ հայտնել է, որ իր գնային առաջարկի 52-րդ չափաբաժնով նախատեսված տեխնիկական բնութագրի նկարագրության մեջ տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ, ինչի հետևանքով տեխնիկական բնութագիրը ամբողջությամբ չի արտացոլել առաջարկվող ապրանքի նկարագրությունը, և չնայած

տեղ գտած այդ թյուրիմացությանը՝ առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը ամբողջությամբ համապատասխանում է Ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին:

Ըստ Ընկերության՝ «ԷյՋԹի Էլեքթրոնիքս» ՍՊԸ-ն առաջարկել է հրավերի պահանջներին չհամապատասխանող ապրանք, և 52-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրի նկարագրությունը վրիպակ չի կարող լինել, իսկ վրիպակի շտկումն էլ չի փոփոխի տվյալ ապրանքի տեխնիկական բնութագիրը և «ԷյՋԹի Էլեքթրոնիքս» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքը չէր կարող համապատասխանել հրավերի պահանջներին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Ըստ Ընկերության՝ վերը նշվածը բավարար էր «ԷյՋԹի Էլեքթրոնիքս» ՍՊԸ-ի հայտը անբավարար ճանաչելու համար:

«Ջի Վի Էն» ՍՊԸ-ն նշել է նաև, որ եթե Պատվիրատուին բավարարում է ավելի ցածր տեխնիկական հատկանիշով ապրանքը, ապա ինչու է հրավերով պահանջում բարձր տեխնիկական հատկանիշով ապրանք, այն դեպքում, երբ «Գնումների մասին» օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար:

«Ջի Վի Էն» ՍՊԸ-ն հայտնել է, որ «Էդգար Մակարյան» ԱՁ-ն Ընթացակարգի 45-րդ չափաբաժնով առաջարկել է «Ֆոտոխցիկ SONY SLE A58K» ապրանքը և այդ չափաբաժնով ներկայարել է նվազագույն գնային առաջարկ: Ըստ «Ջի Վի Էն» ՍՊԸ-ի՝ նման մակնիշի ֆոտոխցիկ գոյություն չունի, սակայն ԱՁ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

Ընկերությունը բողոքով տեղեկացրել է նաև, որ ստացել է ծանուցում, որի համաձայն «ԵՊՀ-ՇՀԱՊՁԲ-15/09» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 16.04.2015թ. հրավիրում է արտահերթ նիստ՝ Ընթացակարգի 44-րդ, 45-րդ,

52-րդ և 54-րդ չափաբաժիններով պարզաբանում ստանալու նպատակով, որին «ՋԻ ՎԻ ԷՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը չի ներկայացել:

2015թ. ապրիլի 21-ին Ընկերությունը չի ստացել ծանուցում այն մասին, թե գնահատող հանձնաժողովը վերջապես ինչ որոշում է կայացրել և պարզել է, որ ծանուցում չի լինելու և, ըստ էության, մերժվել է «ՋԻ ՎԻ ԷՆ» ՍՊԸ-ի կողմից բարձրաձայնած բոլոր խնդիրները:

Ընկերությունը հայտնել է, որ ստեղծված իրավիճակը պետք է շտկվի գնահատող հանձնաժողովի կողմից, այլ ոչ թե մասնակիցների: Բացի այդ, գնահատող հանձնաժողովը շատ մանրակրկիտ է ներկայացրել պահանջվող ապրանքների տեխնիկական բնութագրերը, ինչն ենթադրում է, որ նույն կերպ էլ պետք է գնահատի մասնակիցների առաջարկները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նպատակի իրագործման համար, գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝ գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում:

Օրենքի 12-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:
- 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

Օրենքի 45-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:
- 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի նույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով վերոնշյալ իրավական նորմերի դրույթներով՝ «Ջի Վի Էն» ՍՊԸ-ն խնդրել է չեղյալ հայտարարել «ԵՊՀ» Հիմնադրամի կողմից էլեկտրատեխնիկայի, ռադիոտեխնիկայի և կենցաղային սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՊՀ-ՇՀԱՊՁԲ-15/09» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.04.2015թ. ժամը 16:00-ին տեղի ունեցած նիստի N 3 շտկված արձանագրության 2.1 կետով 44-րդ, 45-րդ, 52-րդ և 54-րդ չափաբաժիններով «Մագնատէս» ՍՊԸ-ին, «ԷլջԹի Էլեքթրոնիքս» ՍՊԸ-ին և «Էդգար Մակարյան» ԱՁ-ին հաղթող ճանաչելու մասին որոշումը:

Կենտրոնում 30.04.2015թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած քննարկման ժամանակ տեղեկանալով, որ գնային առաջարկում «Էդգար Մակարյան» ԱՁ-ն թույլ է տվել տառային վրիպակ՝ «SONY SLT A58K» մոդելի փոխարեն գրելով «SONY SLE A58K», ինչի կապակցությամբ 10.04.2015թ. թիվ 15/24-1 գրությամբ հայտնել է Ընթացակարգը գնահատող հանձնաժողովի նախագահ Ա. Ղարիբյանին, «Ջի Վի Էն» ՍՊԸ-ի ներկայացուցիչը ընդունել է, որ «SONY SLT A58K» գոյություն ունեցող մակնիշի ֆոտոխցիկ է, ուստի այդ մասով իր պահանջը այլևս չի պնդում:

<u>2. «Երևանի պետական համալսարան» Հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը</u>

«Երևանի պետական համալսարան» Հիմնադրամը 30.04.2015թ. թիվ 01-24/13 գրությամբ ներկայացրել է «ԵՊՀ-ՇՀԱՊՁԲ-15/09» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող փաստաթղթերի պատճենները:

Միաժամանակ վերոհիշյալ գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ ուսումնասիրելով «Ջի Վի Էն» ՍՊԸ-ի 22.04.2015թ. ներկայացրած բողոքը, անհիմն է համարում Ընկերության Ընթացակարգի 44-րդ, 45-րդ, 52-րդ և 54-րդ չափաբաժիններով հաղթող ճանաչելու մասին որոշումը չեղյալ հայտարարելու պահանջը, քանի որ «ԵՊՀ» Հիմնադրամը գործել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, ինչը պահպանվել է Պատվիրատուի կողմից:

Պատվիրատուն տեղեկացրել է, որ մասնակիցները հրավիրվել են պարզաբանման՝ իրենց կողմից առաջարկված ապրանքների տեխնիկական բնութագրերի հետ կապված ճշտումներ կատարելու նպատակով:

Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

Պատվիրատուն նշել է, որ Օրենքի վերը նշված հոդվածով սահմանված պահանջներին «Երևանի պետական համալսարան» Հիմնադրամը հստակ հետևել է, այսինքն, Ընթացակարգի բնութագրերը ներկայացվել են առանց երկակի մեկնաբանության, հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագրերը պարունակել են «կամ համարժեք» բառերը:

Ինչ վերաբերում է Ընկերության այն պնդմանը, որ Պատվիրատուի կողմից տրամադրվել են միայն գնային առաջարկները, իսկ մասնակիցների կողմից հայտով ներկայացրած ապրանքների տեխնիկական բնութագրերը չեն տրամադրվել, ապա Պատվիրատուն նշել է, որ շրջանակային համաձայնագրերով մասնակցից պահանջվում է ներկայացնել դիմում և գնային առաջարկ:

Պատվիրատուն տեղեկացրել է, որ «Մագնատէս» ՍՊԸ-ն հաղթող մասնակից է ճանաչվել, քանի որ բանավոր հավաստել է, որ ինքը առաջարկել է և տրամադրելու է նույն մոդելը, ինչ պահանջվել է հրավերով, այլ ոչ թե համարժեք մոդել:

Պատվիրատուն նշել է նաև, որ «Էդգար Մակարյան» ԱՁ-ն իր գնային առաջարկում SONYSLTA58K մոդելի փոխարեն գրել է SONYSLEA58K, այսինքն տեղի է ունեցել տառային վրիպակ («T» տառի փոխարել գրվել է «E» տառը), ինչը շտկվել է «Էդգար Մակարյան» ԱՁ-ի կողմից: Համաձայն գնումների մասին ՀՀ օրենսդրության՝ արձանագրված թերության դեպքում մասնակցին տեղյակ պահելու կամ իր կողմից նկատելու դեպքում մասնակիցը իրավունք ունի շտկել արձանագրված թերությունները, իսկ չշտկվելու դեպքում հաղթող է ճանաչվում երկրորդ նվազագույն գին առաջարկած կազմակերպությունը:

«Երևանի պետական համալսարան» Հիմնադրամը հայտնել է նաև, որ «ՋԻ ՎԻ ԷՆ» ՍՊԸ-ն բազմիցս հեռախոսազանգերի միջոցով ցանկացել է նույն բանավոր խոսքով թելադրել, թե ինչպես վարվի գնահատող հանձնաժողովը, սակայն Պատվիրատուի կողմից չի անտեսվել բողոքարկող կողմի բողոքները և որպեսզի թյուրիմացություն և չպարզաբանված հարցեր չմնան, մասնակիցներին համապատասխան փաստաթղթերով հրավիրել է հավելյալ պարզաբանումների, որին բոլորը ներկայացել են՝ բացառությամբ «ՋԻ ՎԻ ԷՆ» ՍՊԸ-ի: Քարտուղարը ևս մեկ անգամ զանգել և փորձել է ճշտել, թե բողոքարկող կողմը ներկայանալու է արդյոք պարզաբանման, բայց վերջինիս ներկայացուցիչը հայտնել է, որ ցանկություն չունի ներկայանալու: Մի քանի օր անց նույն ներկայացուցիչը զանգել և քարտուղարից հարցրել է անգործության ժամկետի վերաբերյալ, որին պատասխանել են, որ անգործության ժամկետն ավարտված է, սակայն «ՋԻ ՎԻ ԷՆ» ՍՊԸ-ն «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրել է բողոքը:

«ՋԻ ՎԻ ԷՆ» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով նշել է Օրենքի 45-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը, որի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի նույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:

Վերը նշվածի վերաբերյալ Պատվիրատուն հայտնել է, որ «ՋԻ ՎԻ ԷՆ» ՍՊԸ-ն խնդրել է չեղյալ համարել հաղթող ճանաչելու մասին որոշումը, այսինքն՝ Ընկերության վկայակոչած Օրենքի հղումը և պահանջը չեն համապատասխանում միմյանց: Ընկերությունը բողոք ներկայացնելու համար ուներ բավականին ժամանակ, սակայն Պատվիրատուին ավելի մեծ անհանգստություն պատճառելու դիտավորությամբ՝ բողոքը ներկայացրել է անգործության ժամկետի ավարտից հետո:

Պատվիրատուն տեղեկացրել է, որ «ՋԻ ՎԻ ԷՆ» ՍՊԸ-ի առաջարկած գները մի քանի անգամ ավելի թանկ են մյուս մասնակիցների գներից, ինչպես նաև իրենց կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերում ևս առկա են թերություններ և դրանք չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, այսինքն Ընկերության առաջարկած համարժեք մոդելները ոչ միայն լավը չեն, այլև ավելի թույլ են:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պատվիրատուն խնդրել է «ՋԻ ՎԻ ԷՆ» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքը մերժել:

Նիստում պատվիրատուն պնդել է 30.04.2015թ. թիվ 01-24/13 գրությամբ հայտնած իր դիրքորոշումը:

3. ԳԲԽ-09/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Ջի Վի Էն» ՍՊԸ-ի 22.04.2015թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, «Երևանի պետական համալսարան» Հիմնադրամի ներկայացրած 30.04.2015թ. թիվ 01-24/13 գրությունը և կից փաստաթղթերը, «ԵՊՀ-ՇՀԱՊՁԲ-15/09» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր), հայտնում է հետևյալը.

ԳԲԽ-09/15 բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Երևանի պետական համալսարան» Հիմնադրամի կողմից էլեկտրա-տեխնիկայի, ռադիոտեխնիկայի և կենցաղային սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՊՀ-ՇՀԱՊՁԲ-15/09» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցել են մի շարք կազմակերպություններ, այդ թվում նաև՝ «Ջի Վի Էն» ՍՊԸ-ն, «ԷյԹի Էլեքթրոնիքս» ՍՊԸ-ն, «Մագնատէս» ՍՊԸ-ն և «Էդգար Մակարյան» ԱՁ-ն:

2. «Երևանի պետական համալսարան» Հիմնադրամն Ընթացակարգի Հրավերի N 1 հավելված տեխնիկական բնութագրի «Ապրանքատեսակի անվանումը» սյունակում սահմանվել է՝

- 44-րդ չափաբաժնով՝ «Ֆոտոխցիկ CANON կամ համարժեք»,
- 45-րդ չափաբաժնով՝ «Ֆոտոխցիկ CANON կամ համարժեք»,
- 52-րդ չափաբաժնով՝ «Հեռախոս PANASONIC կամ համարժեք», բնութագիրը՝ **3-Line LCD display եռագիծ LCD էկրան**, Caller ID զանգելու ID, Redialling վերահավաքում, 20 numbers memory 20 թիվ հիշողություն, 10 nubers fast calling (from memory) 10 թիվ արագ հավաքում (հիշողությունից), Microphone off բարձրախոսի անջատում, Handset volume control հեռախոսասարքի ձայնի կարգավորում, Ring volume control (4 levels) զանգի մակարդակի կարգավորում, Clock (Date ժամ) ամսաթիվ, Speakerphone խոսափող, Number of Phone Lines: 1հեռախոսային գծի թվերը, Wall mountable պատին հարմարեցնելու սարք, կամ համարժեք:
- 54-րդ չափաբաժնով՝ «Դիկտոֆոն SONY կամ համարժեք»:

3. «Մագնատէս» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով առաջարկել է՝ 44-րդ չափաբաժնով՝ «Ֆոտոխցիկ CANON կամ համարժեք», 45-րդ չափաբաժնով՝ «Ֆոտոխցիկ CANON կամ համարժեք», 54-րդ չափաբաժնով՝ «Դիկտոֆոն SONY կամ համարժեք» ապրանքատեսակները: Այնուհետև, Մագնատէս» ՍՊԸ-ն Պատվիրատուին հայտնել է, որ տրամադրելու է հրավերով պահանջվող մոդելը, այլ ոչ համարժեքը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 13.04.2015թ. ժամը 16:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությունը ուղարկել է Ընթացակարգի մասնակից-

ներին, որտեղ վրիպակի արդյունքում չի նշվել «Մագնատէս» ՍՊԸ-ին 44-րդ չափաբաժնով որպես ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ տեղեկատվությունը: Այնուհետև հայտնաբերելով առկա թերությունը, նույն օրը գնահատող հանձնաժողովի կողմից վերացվել է վերը նշված թերությունը, այն է՝ նույն արձանագրության 2.1 կետով որոշում է կայացվել «Մագնատէս» ՍՊԸ-ին 44-րդ չափաբաժնով որպես ընտրված մասնակից ճանաչելու մասին և թիվ 3 արձանագրության շտկած տարբերակը ուղարկվել է Ընթացակարգի մասնակիցներին:

5. «ԷյջԹի Էլեքթրոնիքս» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով 52-րդ չափաբաժնով սահմանված «Հեռախոս PANASONIC» ապրանքատեսակին որպես համարժեք ապրանք առաջարկել է «Հեռախոս PANASONIC KX-TS2368RUW»:

6. «Էդգար Մակարյան» ԱՁ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով 45-րդ չափաբաժնով սահմանված «Ֆոտոխցիկ CANON» ապրանքատեսակին որպես համարժեք ապրանք առաջարկել է «Ֆոտոխցիկ SONY SLE A58K»:

7. «Էդգար Մակարյան» ԱՁ-ն Ընթացակարգի հանձնաժողովի նախագահ Ա. Ղարիբյանին ուղղված 10.04.2015թ. թիվ 15/24-1 գրությամբ հայտնել, որ 45-րդ չափաբաժնի համար առաջարկված համարժեք ապրանքատեսակի անվան մեջ ԱՁ-ն թույլ է տվել տառային վրիպակ՝ «SONY SLT A58K» մոդելի փոխարեն գրվել է «SONY SLE A58K»:

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 13.04.2015թ. ժամը 16:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ 2.1-րդ կետով որոշում է կայացրել Ընթացակարգի՝

- 44-րդ չափաբաժնով որպես ընտրված մասնակից ճանաչել «Մագնատէս» ՍՊԸ-ին:
- 45-րդ չափաբաժնով որպես ընտրված մասնակից ճանաչել «Էդգար Մակարյան» ԱՁ-ին:
- 52-րդ և 54-րդ չափաբաժիններով որպես ընտրված մասնակից ճանաչել «ԷյջԹի Էլեքթրոնիքս» ՍՊԸ-ին:

4. ԳԲԽ-09/15 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման սկզբունքների վրա:

Օրենքի 12-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:
- 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝ պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար, չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:
- 4-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի և (կամ) գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (մինչև ՀՀ կառավարության 30.01.2015թ. 105-Ն որոշմամբ կատարված փոփոխությունների խմբագրությամբ, այսուհետ նաև՝ Կարգ)

110-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ շրջանակային համաձայնագրերի միջոցով էլեկտրոնային եղանակով գնում կատարելու դեպքում կիրառվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգը հաստատելու մասին» N 1916-Ն որոշմամբ սահմանված պահանջները, իսկ փաստաթղթային ձևով գնում կատարելու դեպքում կիրառվում են հետևյալ պայմանները՝

1) հայտը ներառում է շրջանակային համաձայնագիր կնքած անձի կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու մասին դիմումը,

բ. գնային առաջարկը:

Կարգի 110-րդ կետի 4-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ պահանջի դեպքում հրապարակված գնային առաջարկների պատճեններն անհապաղ տրամադրվում են նման պահանջ ներկայացրած մասնակցին:

Գտնում ենք, որ «Երևանի պետական համալսարան» Հիմնադրամի կողմից չեն խախտվել Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջները, «ԵՊՀ-ՇՀԱՊՁԲ-15/09» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը իրականացվել է գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման սկզբունքի համապատասխան, և «Ջի Վի Էն» ՍՊԸ-ի համար անհավասար պայմաններ չեն ստեղծվել Պատվիրատուի կողմից կազմակերպված գնման գործընթացին մասնակցելու համար: Ուստի այս մասով «Ջի Վի Էն» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքը անհիմն է և ենթակա է մերժման:

«Երևանի պետական համալսարան» Հիմնադրամի կողմից պահպանվել են նաև Օրենքի 12-րդ հոդվածի պահանջները, 44-րդ, 45-րդ, 52-րդ և 54-րդ չափաբաժիններով գնման առարկայի բնութագրերը ամբողջությամբ և հստակ նկարագրել են ձեռքբերվող ապրանքի հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը:

Անհիմն է «Ջի Վի Էն» ՍՊԸ-ի այն պնդումը, որի համաձայն՝ Ընթացակարգի 44-րդ և 45-րդ չափաբաժիններով «Մագնատէս» ՍՊԸ-ի կողմից խախտվել են «Գնումների

մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները, քանի որ նշված հոդվածի պահանջները վերաբերում են պատվիրատուի կողմից գնման առարկայի բնութագրերը կազմելուն: Ավելին, շրջանակային համաձայնագրերի միջոցով էլեկտրոնային եղանակով գնում կատարելու դեպքում հայտը ներառում է շրջանակային համաձայնագիր կնքած անձի կողմից հաստատված գնման ընթացակարգին մասնակցելու մասին դիմումը և գնային առաջարկը, և մասնակիցը չի կրում պարտավորություն ներկայացնելու իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը: Ուստի, այս մասով «Ջի Վի Էն» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքը, նույնպես, ենթակա է մերժման:

Պատվիրատուի կողմից պահպանվել են նաև Կարգի 110-րդ կետի 4-րդ ենթակետի «բ» պարբերության սահմանված պահանջները, քանի որ «Ջի Վի Էն» ՍՊԸ-ին տրամադրվել են մասնակիցների գնային առաջարկների պատճենները:

Գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Ընթացակարգի 44-րդ չափաբաժնով «Մագնատէս» ՍՊԸ-ի առաջարկվող ապրանքը Հրավերի տեխնիկական բնութագրին համապատասխանող ճանաչելու որոշումը չի հակասում Օրենքի 31-րդ հոդվածի պահանջներին, քանի որ «Մագնատէս» ՍՊԸ-ի հայտով ներկայացված առաջարկը Հրավերի պահանջներին անհամապատասխան համարելու հիմքեր առկա չեն, ուստի այս մասով «Ջի Վի Էն» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքը նույնպես անհիմն է և ենթակա է մերժման:

«Էդգար Մակարյան» ԱՁ-ի կողմից 45-րդ չափաբաժնով առաջարկված ֆոտոխցիկի կապակցությամբ հայտնում ենք, որ վերոհիշյալ ապրանքի անվանման մեջ Էդգար Մակարյան» ԱՁ-ն թույլ է տվել տառային վրիպակ՝ «SONY SLT A58K» մոդելի փոխարեն գրելով «SONY SLE A58K», ինչի կապակցությամբ 10.04.2015թ. թիվ 15/24-1 գրությամբ հայտնել է Ընթացակարգի հանձնաժողովի նախագահ Ա. Ղարիբյանին: Այսպիսով, գտնում ենք, որ այդ մասով «Ջի Վի Էն» ՍՊԸ-ի պատճառաբանությունը նույնպես անհիմն է, քանի որ «SONY SLT A58K»-ն գոյություն ունեցող մակնիշի ֆոտոխցիկ է, ինչը ընդունել է նաև «Ջի Վի Էն» ՍՊԸ-ի ներկայացուցիչը՝ Կենտրոնում 30.04.2015թ. ժամը 15:00-ին տեղի ունեցած քննարկման

ժամանակ և հայտնել, որ այդ մասով Ընկերությունը հրաժարվում է բողոքով ներկայացրած իր պահանջից:

Ինչ վերաբերում է «ԷյջԹի Էլեքթրոնիքս» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգին մասնակցելու նպատակով 52-րդ չափաբաժնով առաջարկված «Հեռախոս PANASONIC KX-TS2368RUW» ապրանքատեսակը Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Ընթացակարգի հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող ճանաչելուն, ապա գտնում ենք, որ Պատվիրատուն խախտել է Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները: Մասնավորապես, Պատվիրատուի կողմից 52-րդ չափաբաժնով՝ «Հեռախոս PANASONIC կամ համարժեք» ապրանքի համար որպես պարտադիր պայման նախատեսվել է՝ 3-Line LCD display եռագիծ LCD էկրանը, մինչդեռ «ԷյջԹի Էլեքթրոնիքս» ՍՊԸ-ի կողմից որպես համարժեք ներկայացված «Հեռախոս PANASONIC KX-TS2368RUW» ապրանքը Հրավերին համապատասխանող համարելու ապացույցներ Պատվիրատուի կողմից չեն ներկայացվել: Բացի այդ, «Ջի Վի Էն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված համացանցային համապատասխան կայքերի[1] ուսումնասիրությունից երևում է, որ «ԷյջԹի Էլեքթրոնիքս» ՍՊԸ-ի կողմից որպես համարժեք առաջարկված «Հեռախոս PANASONIC KX-TS2368RUW» ունի 2-Line LCD display երկու գիծ LCD էկրան: Ուստի, վերը նշված հիմքով բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք «Ջի Վի Էն» ՍՊԸ-ի 22.04.2015թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի՝ դադարեցնել «ԵՊՀ» Հիմնադրամի կողմից էլեկտրատեխնիկայի, ռադիոտեխնիկայի և կենցաղային սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՊՀ-ՇՀԱՊՁԲ-15/09» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.04.2015թ. ժամը 16:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2.1 կետով «ԷյջԹի Էլեքթրոնիքս» ՍՊԸ-ին 52-րդ չափաբաժնով հաղթող ճանաչելու մասին որոշումը:

«Ջի Վի Էն» ՍՊԸ-ի բողոքը մնացած մասերով մերժել:

---

[1] http://rus.panasonic.ru/products/phones/dect_phone/analog_phone/KX-TS2368RUW, http://rozetka.com.ua/118245/p118245/, http://i2000.ru/ishop/3759/21230/

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի գլխավոր մասնագետ՝ ԳԲԽ-09/15 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Հովակիմյան